ՀՀ Վայոց ձորի մարզպետ
Կոլյա Միքաելյան

«Հետաքննող լրագրողներ» ՀԿ-ի
«Հետք» թերթի լրագրող
Գրիշա Բալասանյանից
Հեռ. 093-82-26-80, e-mail: grisha.balasanyan@hetq.am

23.09.2024թ.

Հարգելի պարոն *Միքաելյան*,

«Հետք» էլեկտրոնային թերթը հոդված է պատրաստում: «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6,9,12-րդ հոդվածների հիմքով խնդրում եմ տրամադրել տեղեկատվություն հետևյալի մասին.

1. Մարզպետարանի ենթակայության քանի՞ բժշկական հաստատություն կա մարզում:

2. Որտե՞ղ են թափվում կամ ոչնչացվումբ, ի՞նչ եղանակով են ոչնչացվում բժշկական թափոնները (վիրահատությունից, դիահերփումից առաջացած թափոններ): *Տեղեկատվությունը տրամադրել ըստ բժշկական հաստատությունների՝ առանձին-առանձին, նշելով վայրը, որտեղ թափվում են թափոնները կամ ոչնչացվում:*

3. Եթե բժշկական կենտրոններում առաջացած թափոնները ոչնչացնելու վերաբերյալ կնքվել են պայմանագրեր, խնդրում եմ տրամադրել տեղեկություններ՝ *ծառայություն մատուցող ընկերությունների, պատվիրատուի, պայմանագրի գնի, ժամկետների վերաբերյալ՝ առանձին-առանձին, ըստ բժշկական հաստատությունների:*

4. Մարզի տարածքում կա՞ն համապատասխան վայրեր, որոնք նախատեսված են բժշկական թափոնները թափելու կամ ոչնչացման համար:

Ծանուցում. Խնդրում եմ տեղեկատվությունը տրամադրել օրենքով նախատեսված 5-օրյա ժամկետում:

Հիշեցում. Նշված վերաբերյալ հավաքված տեղեկատվություն չունենալը կամ վիճակագրություն չվարելը հիմք չէ տեղեկատվությունը մերժելու համար, հետևաբար խնդրում եմ նման դեպքերում տեղեկատվությունը հավաքել և հայցողին տրամադրել օրենքով նախատեսված ժամկետներում:

Կանխավ շնորհակալություն

Դիմող՝ Գ. Բալասանյան

ՀՀ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտքի թիվ 8464
«23» 09 2024թ.